

- 114 Սոյն պատանեակ հեղաբարոյ,
Համեստ է՝ ունակ պերճ հանճարոյ,
Ոչ դադարիւր յուսանելոյ
Ըզդըպրութիւնս, վարս լաւ կելոյ:
- 115 Որպէս եւ իսկ բարւոք ուսեալ,
Ըստ քաջ որդւոյ զըսպաս տարեալ,
Հօրն հոգեկան յաւետ գովեալ,
Աւնէ ըզնա գոհ եւ բերկրեալ:
- 116 Թէպէտ զօլիճակ բաբունական
Խոկայր ունել նա յետ ուսման,
Այլ հաճութեամբ վերին կոչման
Կարգիւր ի դաս աշխարհական:
- 117 Եւ որ յետոյ զերթ աշխարհիկ
Ի գործ գընէր անդ յիւր բընիկ,
Եւ յայլ յաշխարհս ոչ սակաւիկ
Չանձինն հանճար գովութեամբ ձիգ:
- 118 Այս այր ըզգաստ արդ գրտանի
Ի Բիւզանդի^օա յիւր հայրենի
Ամուսնացեալ կամօք Էրկնի,
Ջբաղեալ ի գործ արդար շահի:
- 119 Եւ արդ Սարգիս յետ ինչ ամաց
Երթեալ նրստէր հանդարտակեաց
Ի Ղալաթի^օա ըստ իւր կամաց,
Ի ժամատան մեր հայկազանց:
- 120 Ուր ի տաճար Սուրբ Գ^օրիգորի
Ազգի մերում Լուսաւորչի
Քարոզ կարգայր ըստ իւր ծիսի
Յարգեալ յԱզգէն սիրով կարի: